



## ԱՆԵԱՏՈՒԹԵԱՆ ԻՐԱՒՈՒՆՔՆԵՐԸ

**ԱՄՐԱՂՋ** իտալական ազգէն յարուած և իր հօտէն շաա սիրուած Եպիսկոպոսի մը ձայնովն է՝ որ կ'ազեմ՝ երկու խօսք ընել ժամանակակից հրատապ ինկրոյ մը վրայ, որ ոչ միայն ընդհանուր Երրոպիայ փոքր և մեծ Պետութեանց ուշադրութիւնը գրուած է այսօր, այլ նաեւ գէթ Ռուսիանրակ Հայոց հետ ալ սերտ կապակցութիւն ունի:

Կրեմննա քաղաքին ժողովրդասէր հովիւն, Երեմիա եպօ. Բոնու մէլլի, նոր հրատարակութիւն մ'ըրած է վերջին օրերուս մէջ. պատկանելի հատոր մը՝ որ Միլանի մէջ տպագրուած է, և կը կրէ Ալեանայիե տերեւներ (Foglie autunnali) մակդիրը: — Հակառակ իւր ախաղասին՝ այս հրատա-

րակութիւնս կարելի է Գարեհաղարհի բնօրինակներ անուանել, քանի որ կը բովանդակէ ազնուական կեանքի և մաքի մը խառնուրդներ, պատուաբեր սկզբունքներ և առջարկներ, մտածութեան նորութիւն և ժամանակակից ձեւեր, և պարզութեան հետ՝ բացարարութեանց պերճութիւնը։ Այս ամէն ճիւղերու ալ յառաջ կու գան անկեղծ հաւատքէ մը, որ օժուած է զէպ ի թշուառներն ունեցած և ազգած ջերմ գիտով, ինչպէս նաեւ հայրենասիրական տաքուկ ներշնչումով։

Հրատարակութիւնս հետեւեալ զլեկակարգութեանց բաժնուած է. 1. Խիստառարիւն. 2. Կրօնքի մէջ զգացողարիւն և նեւակերպարիւնք. 3. Միխրարական վարդապետութիւնք. 4. Կրօնական պատմութիւնք. 5. Գործադրութիւն և անկեղ զրիչներն. 6. Քրիստոս ինր կարտրու. 7. ՎԱՐԻՅԱԼԳԻ ետունը յրօշին օրնուարիւնք. 8. Ոսկեղիկիկ Պատարագ։

Գիտումս է՝ այս գրքէն յառաջ բերել միայն քանի մը պատաստիկներ, որոնք կը վերաբերին երկրագործներու և հանրային ընկերական խնդիրներու լուծման առեղծուածին. որովհետեւ այլ զաղափարները ազգիս մէջ տարածելու ջանքն օգտուէտ կը գատիմ, և զանոնք համաձայն կը գտնեմ նաեւ Միթարեանց ուղղութեան և սկզբունքներուն. ինչպէս համոզուած եմ անոնց հակառակ սկզբունքներուն ֆրասակարութեան, ինչ որ երբեմն երբեմն անզոյճ գրիչներ՝ գործաւորաց դատր պաշտպանել կարծելով, բայց ժամանակիս ընկերավարական յախուռն և երազամիտ մղումներէ դրուած, օրաթերթերու ձեռքով և եւրոպական գրիչներու ֆրասակար յօդուածներու թարգմանութիւններով կը ջանան գիտակցարար, և ոմանք ալ գուցէ անպիտակցարար կը գործակցին, զանոնք ազգիս մէջ ալ սպլլել ու տարածել։

Բռնումս կը յայտարարէ որ գործադուրք միշտ ֆրասակար են թէ՛ գործաւորաց և թէ՛ աւերներն. ուստի հարկ է միջոցներ փնտռել որ տեղի չունենան, այսինքն է՝ ջնջել այն պատճառները որոնք առիթ կու տան գործադուրքներու։ Վերոյիշեալ Եպիսկոպոսին յասակարգը, որ այնքան երեսի վրայ թու-

լուած է, մինչդեռ աւերութիւնն անոնց պարտական է իրեն հարասութիւնն։ Անոնց ուղղելով խօսքը՝ կը գտէ. « Դուք, ս'լ գիւղականք, լաւ գիտէք որ ես միշտ գաւառին պաշտպան եմ կրնպնած, որովհետեւ զայն արարա ճանչցեր եմ, այնքան՝ որ մինչեւ կասկածողներ եզան՝ իրր թէ ես չափականց կերպով հետամուտ եղած եմ ձեր իրաւունքները ջատագովելուս մէջ, Այս, պաշտպանած եմ զձեզ և պիտի պաշտպանեմ, որովհետեւ զձեզ իրրեւ իմ զուակներս սիրեր եմ. որովհետեւ ձեր մէջը միշտ վառ դար եմ այն հաւատքը, ինչ որ ձեր աւերելն շատերուն սրաին մէջ թմրած և զուցէ մարած կը տեսնուի. որովհետեւ զուք չայրենի երկրին մեծամանութիւնը կը կազմէք. որովհետեւ զուք սկար էք և վշապիր. որովհետեւ Աւետարանն ինձ կը բարոզէ թէ Եպիսկոպոս մը պարագն է՝ արգարութեանն չչեղելով՝ միշտ սկարին կարօտելոյն լքելոյն կողմը բռնել . . . և զուք այգպիսիներ էք։ Վստահ եղէք, ս'լ գիւղականք, որ բնաւ երկիւղ մը, բնաւ բռնութիւն մը պիտի չկարենայ զոցել բերանս և լռեցնել սալ՝ ձեր իրաւունքները պաշտպանելէ ձեր աւերելուն երեսն ի վեր. ոչ, բնաւ պիտի չլքանեմ ես ձեր դատը, և ոչ պիտի գրծեմ երբեք այն պարագին՝ որ պաշտօնս վրաս կը գնէ »։

Կը շրջէ յետոյ խօսքը կալուածատէրներուն, և կ'ըսէ. « Իրաւունք չունիք զուք դառն կերպով և չափականց խառնութեամբ վարուելու ձեր գործատրներուն և զիւղացիներուն հետ, ինչպէս դժբախտարար կ'ընեն ձեզմէ սմանք։ Մի՛ մոռնաք երբեք՝ որ արբ բաւոտրներն ու մշակներն ձեր եղբայրներն են, և գուցէ անոնց միջէն սմանք ձեզմէ աւելի լաւ ու պատուաւոր մարդիկ են։ Դուք հարուստ էք, շքեղ կը հագուիք, սուններու և պալատներու մէջ կը բնակիք, միշտ պատրաստ ևս ճոխ սեղան մ'անիք սոջեւիպ. իսկ անոնք աղքատ են, պատաստուռն խոյնճուկրակ քուրջեր հագած, ողորմելի հիւղարու մէջ կը բնակին, և շրջաբուր կը նստին աղքատին ճաշիկի մը չորս գին . . . Բայց այս բաներս չեն՝ որ բանականութեան և

հաւատքի աչքերուն առջեւ մարդ մարդէ կը դանազանեն: Երազրականն է իմար բան է՝ բանաւոր և քրիստոնեայ մարդոց մէջ՝ դաւրուս բողոքներուն մէջ՝ որ պղատութիւն — հաւատարութիւն — եղբայրակցութիւն կը գուսայ, հարստութեանց և զգեստներու, կամ կառքուածիներու և ապիկազօծ կրթութեան մը վրայ՝ հաստատել մարդուս մեծութիւնն և արժանապատուութիւնը: Մինչպէս շատ անգամներ հարկ կ'ըլլայ փոփոխել այդ կարգը, որովհետեւ գիւղացին իր արիւմէն աւելի համեստ, պատուաւոր, արդար և հայրենեաց օգտակար կը հանդիսանայ: ... Գուցէ իրաւունք ունի՞ր ձեր վարձուորներէն ու մշակներէն պահանջելու՝ իրենց և ձեր մէջ կանխաւ դաշնադրուած աշխատութիւննին, պահանջելով ինչ որ պատշաճն է և ոչ թէ չափազանց: Զգոյշ կեցէք մանաւանդ ծանր աշխատութեանց ներքեւ չճրնջելու կիներն և օրիորդները: անոնք ձեր գերիններ չեն, այլ ազատ քաղաքացիներ, այլ բարի քրիստոնեաներ, որոնք իրենց հպտակութեան մէջ անդամ՝ արժանի են ձեր յարգանքին, և սրբազան անկապախելի իրաւունքնեպ ունին Աստուծոյ և մարդկանց առջեւ »: ...

Շարունակութեան մէջ՝ բրինձնոցներու աշխատութեանց վրայ խօսելով՝ կ'ըսէ. « Ստուգիլ գիտեմ թէ կան այնպիսի գաւառներ՝ ուր 60 հարիւրչայն միայն կը վճարուին իրեն օրական հասուցումն այն խեղճ կիներուն, որոնք օրն ի բուն կ'աշխատին՝ սրունքնին կիտով ջրի մէջ և գլուխնին արեւուն կիզել ճատագայթներուն տակ: ... Միայն 60 հարիւրչէք . . . անհաստատի՛ բան: . . . Արդ, ինչպէս կարելի է ապրիլ՝ օրական 60 հարիւրչէքով՝ այնպիսի չարատանջ և հակառողջ գործոյ մը մէջ: . . . Եւ դեռ կը պահանջէք որ գործադուլ չընեն: Գուցէ, ս'ի կալուածատէրեր, դուք էք՝ որ այս կերպով զէնք կու տաք ընկերակարներու ձեռքը, և իրենք լիսի իրաւունք ունին ձեզի գէմ բուզք բարձրացնելու և արդարութիւն պահանջելու յանուն մարդկութեան »:

Կը յայտնէ Քոնստէնտինով՝ որ իր հալտաւան պաշտօնին պարտքը կատարել ուզելով՝ այցելած է շատ անգամներ աղքատներու բնա-

կարանները, որոնց մեծագոյն մասին՝ աւելի խոսողներ և որջեր, կ'ըսէ, քան բնակարան անունը պէտք է տալ. որոնց մէջ զեանի վրայ ձուրած կան երկու կամ երեք ոտորմելի խշտեակներ, որոնց վրայ յաճախ սեռի բաժանման օրէնքն անպամ անկարելի կ'ըլլայ պահպանել . . . և խեղճ դիւղացիք բնականաբար պահանջէ չար կողմն ունին բազմաթիւ դաւակց պսակ մը:

« Այսպիսի խարխուլ խրճիթներու քով, որոնց թշուառ բնակիչները ձմեռը ցրտէն պիտի ստոկն և ամառը տաքէն շնչահեղձ ըլլան, և ամէն տեսակ հիւանդութեանց ենթարկուին, սեսայ տեղտեղ և լի գայլութեամբ կը զուրցնով՝ տեսայ հոյակապ և հովաշարուած ախոռներ, կրանիտ սխներով զարդարուած ձիաստաններ: . . . Այն տէրեր, բրածնիկ ոչ թէ միայն յանցաւոր անհոգութիւն մ'է, այլ իսկապէս եղեռնագործութիւն:

« Բանուոր դասակարգը նիւթական բարեփոխութիւններ կը պահանջէ իր վիճակին, և իրաւունք ունի ստանալու իր պահանջը, որոնցմէ մաս մը ստացեր է արջն իսկ և մաս մ'ալ դեռ պիտի ստանայ: Անարդարութիւն մը պիտի ըլլար՝ շտեմնել ու չճանչնալ ինչ որ մինչեւ օրս ի գործ գրուած է յօգուտ աշխատաւորաց՝ թէ՛ Պետութեան և թէ՛ կալուածատէրներէն ու դրամատէրներէն: Ահա այդ մասամբ մը գործադուրած և մասամբ մ'ալ յուսացուած բարեփոխութիւններն են՝ որ մինչեւ օրս ոգիները հանդարտ բռնի են: Սակայն չեմ տարակուսիր՝ որ քիչ ատենէն պիտի պահանջեն նաեւ յուսացուածներուն գործադուրթիւններն ալ, և պիտի ընդունին՝ քանի որ հնար ըլլայ Պետութեան և դրամատէրներուն զիջանիլ անոնց պահանջանաց. բայց պահանջէ պահանջ առաջ երթալով՝ պիտի հասնի օր մ'ալ՝ երբ ալ հնար չըլլայ զիջումն ընել և ուզածնին շնորհել . . . և այդ օրը սարսփելի օր մը պիտի ըլլայ: . . .

« Ո՛վ դրամատէրեր ու կալուածապետներ, այո՛, հարկ է որ ճանչնաք դուք այն պարտականութիւնները՝ որ ունիք հատկէպ ձեր վարձուորներուն և բանուորներուն, և պէտք է զանոնք գործադրէք. բայց նաեւ միւս կող-

մանկ ալ դուք, ով աշխատաւորներ ու վարձուորներ, պէտք է ճանշնաք և կատարէք փոխադարձաբար ձեր պարտականութիւնները: Եւ ահա այս կէտս է՝ որ յեցած է բարոյական և կրօնական սկզբունքներու վրայ: Մէկ կողմի խումբը պէտք է արդար սահմանա՞ մարտէ իր հաստատաւորու համար ունեցած սողին՝ ու նպաստակին, միւս կողմին ալ պիտի բռն իր զգացած պէտքերուն: « Բաւական է. ինչ որ իրաւունք էր՝ ստացանք, Հիմայ Հանդարտինք » . . .

« Ուշադրութիւննիս դարձրնելով այն ամէն բանի՝ որ անցեալ գարեբու պատմութեանց մէջ՝ կը վերաբերի պրամագլիի և աշխատակրի, սարբրինակ և ցաւալի եղելութիւն մը գիմացնիս կը պարզուի, այսինքն՝ թէ՛ Հին և թէ՛ Միջին Դարերու մէջ, և նորագոյն ժամանակներ իսկ՝ մինչև գրիթէլ գաղղիական յեղափոխութեան տանն, օրէնսդրութիւնն բնաւ կամ գրեթէ բնաւ ուշ գարձուցած չէ աշխատանքի իրաւանց վրայ, այլ միայն և ամէն սեղ՝ դրամադլիի իրաւունքներուն վրայ: Օրէնքն իր ինտամակալութեան և հսկողութեան ներքեւ տաած է ստացուածոց սեփականութեան իրաւունքները, որ է բոսի՝ միայն դրամադլիի իրաւունքները, իբրև թէ՛ աշխատանքը՝ դրամադլիի գրեթէ համազօր մասնակցութիւն ունեցած չլրջարարողինք առաջ բերելուն մէջ: — Ինչ էր արդեօք այդքան մեծ անարդարութեան մը պատճառը: — Ես կը համարեմ այն սկզբունքն՝ որով աշխատանքն ու գերին՝ մի և նոյն բան կը համարուէին. ուստի՝ նա՞ որ աէր էր գերույն՝ աէր էր նաեւ անոր աշխատանքին, ինչպէս այսօր մէկը աէր է իւր գործածած մեքենային: — Կիկերոն և իրեն հետ ամբողջ հեթանոսութիւնն, որուն օրէնքները ճանչցեր և վաւերացուցեր էին գերութեան վիճակը, աշխատութիւնը արհամարհելի բան մը կը դատէր, և միայն գերիներու պատշաճ և սեփական գործ մը: — Մարդկային միտքը և իմաստութիւնը զարգանալով հետզհետէ, (մանաւանդ քրիստոնէութեան ազդեցութեան ներքեւ, որ առաջին անգամ Ս. Պօղոսի բերնով Հրատարակեց՝ թէ Քրիստոսի հաւատքը խարութիւն չի գներ ազա-

տին ու գերին մէջ), աշխատանքն սկսաւ բարձրեց և ոտանայ իւր իրաւունքները: Երբ մարդս ազրանք մ'ըլլալէ պարեցաւ, անմիջապէս աշխատանքն սեփական ստացուածք և գրամագլուի գարձաւ, և մի միակ գրամագլուի բանուոր գտակարային: . . .

« Աւաջ գրամագլուին էր՝ որ օրէնք կը գնէր աշխատանքին վրայ, (և սրբան գտան օրէնքներ). իսկ Հիմայ աշխատանքը կ'ուզէ օրէնսդրի բլլալ գրամագլուին վրայ: Այսօր մեծ ու սլզտիկ՝ ամէնքն ալ աշխատանքի խրնդրով է որ կը հետաքրքրուին և կը զբաղին. աշխատանքի իրաւունքներն են՝ որ կը սահմանադժուին և անոր արժանիքները կը բարձրացուին ամէն պետութեանց գաւառներու մէջ. կարծես կարելի է բռնել՝ թէ՛ բանուոր անունը գրեթէ իբրև ագնուականութեան սխալոս մ'է՛ գարձած, և անոր կապուադոյն — տարրաք օրէնսդրական ժողովներու մէջ երեւցած է, և իր ձայնը լսեցուցած է. . . ահաւոր ձայնը: Այսմեան բոլոր օրէնսդրութիւնք իրենց ուշադրութեան էական առարկայ գարձուցեր են աշխատանքը, որ ամենուն համակրութիւնը գրաւեր է, ինչպէս բնականաւոր գրամագլուին ալ գրեթէ ամէն սեղ հակակրութեան ենթակայ եղած է: Ընդհանրական հակազդեցութիւն մ'է՛ որ ի գործ կը դրուի. դրամագլիին դեմ՝ վրիտանական յովանակ մ'է՛ աշխատանքին, որ խտացած ուժերով օրէ՛ օր կազմակերպութիւն կը ստանայ, և ապահովաբար պիտի հրատարակէ իւր հրամանները: Բայց երբ հասնի այդ կէտին՝ աշխատանքը դրամագլուի կը դառնայ, որով օգտաւէտ այլափոխութիւն մը պիտի կրէ:

« Ապագայն աշխատանքի ձեռքն է, անոր իշխանութեան ներքեւ և ոչ դրամագլիին. միայն թէ՛ աշխատողը իրենց պահանջները չափաւանցութեան չտոնին, վասն զի անով ամենամեծ փոստ հասուցած կ'ըլլան իրենց գատին և թողութիւնը աշխարհիս հինգ մասանց մէջ ալ՝ միշտ զէպ ի վեր վեր կը բարձրանայ, և գտակարգութեանց խարութիւնք կը սկարանան, թէպէտևե կարելի բան չէ՛ որ բոլորովին անհետանան, որովհետև բնութեան, այսինքն՝ Աստուծոյ օրէնքով սահ-

մանուած են վիճակի տարբերութիւնք, և հետեւաբար մարդկութեան զոյութեան հետ սեւտողութիւն պիտի սնննան:

« Այո՛, աշխատանքը պիտի ձեռք բերէ և բազմի այն զահուճ վրայ՝ որ իրեն կը պատկանի, և պիտի չկարենայ մէկը զայն իրմէ յափշտակել: Բնկերակցութեանց, վարիչ-խմբերու և աշխատանքի-տուեսներու գասակարգութիւններով կազմակերպուած աշխատանքը, այսօր կ'ուզարկէ իւր ներկայացուցչիները քաղաքացեաններու և նախարարներու մօտ. և ամէն տեղ ալ անոնք յարգութեամբ կը մեծարուին, և իրեն հաւասար իշխանաւորք կը վարուին վարչական անձանց հետ. մանաւանդ թէ երբեմն նոյն փոկ պետական անձինք կ'ըլլան՝ որ իրենց խորհրդակցութեան կը հրաւիրեն բանուորներու զուխները և կամ՝ աշխատանքի-ատեաններու երեսփոխանները, և եթէ ոչ օրինակով, սակայն տարտիկոյ չկայ որ գործնուկան կերպով զանոնք կազմակերպուած այլ և այլ ընկերութիւններ կը ճանչնան: — Ո՛վ

կրնար ասկէց յիտուն տարի տառջ հաւատալ այս կատարուած իրականութեանց, զորս մենք այսօր աչքովնիս կը տեսնենք: Եւ սակայն ոչ միայն կատարուած իրականութիւնք են, այլ և օրէ օր պիտի ընդարձակին, պիտի ամրապնդին, և քիչ ժամանակէ վերջը իրաւասական զոյութիւն մը պիտի ստանան. և մեզմէ երկար ապրողները պիտի տեսնեն ընդարձակ նոր օրէնսգրութիւն մը՝ զոր պիտի հրատարակէ աշխատանքը, ոչ թէ ազգային, այլ համազգային օրէնսգրութիւն մը: Իրաց հարկն է՝ որ կը մղէ պատրաստելու զայն. և պիտի ըլլայ այն՝ հսկայական քայլ մը բարոյական և ընկերական աներկբայ յաստացիութեան »:

Ահա այսպէս կը խօսի և կը գրէ Բանուածքի Եպիսկոպոսն. և ինձ այնպէս կ'երեւի թէ միայն այդ Հօտապետին պարտքը չէ այդ սկզբանց համաձայն քարոզել և գործել, այլ նաեւ Աւետարանի սուրբ և փրկաւէտ սկզբունքներուն հետեւող ամէն եկեղեցականաց:

Հ. Ա. ՏՐՈՒՅԱՆ

# Հ Ա Յ Կ Ա Կ Ա Ն Ճ Ե Մ Ա Ր Ա Ն

(Ք Ա Ղ Ո Ւ Ա Մ Ք)

Հ Ա Յ Ա Ջ Գ Ի

Ա Ն Ծ Ա Ն Օ Թ Մ Ն Ա Յ Ա Ն

Հ Ե Ղ Ի Ն Ա Կ Ե Ր

Հայեր՝ բիւզանդական գրականութեան մէջ:

Ընդհանրապէս, երբ հարկ ըլլայ խօսիլ այն հեղինակներուն վրայ՝ որ ծագմամբ հայ էին՝ բայց յունարէն լեզուով գրեցին, իսկոյն ի մէջ կը բերենք Արտաւազգը, Տիգրանայ որդին, որ « թաարեբզուութիւններ շինեց, ճառեր և պատմութիւններ գրեց », ինչպէս կ'աւանդէ Ապպիանոս<sup>1</sup>, կամ Պրոյերեսիոս մը՝

այնքան ճարտարախօս, որ Հռովմայեցիք<sup>2</sup> իր պղնձեայ արձանը կանգնեցին՝ հետեւեալ մակագրութեամբ. « Թագուհին իրաց Հռոմ՝ թագաւորին ճարտարխօսութեան<sup>3</sup> »:

Հոս մեր անդեկութիւնները կ'աւարտին, ու կը մնայ գանդատիլ՝ Անցեալին մթութեան վրայ:

1. Յազազ Պարթեական պատերազմին. « τραπεζοῦχος ἐποίησεν καὶ λόγους εὐραφῆ καὶ ἰστορίας, ὧν ἔνιαι διασώζοντα. » Տէս նաեւ Պատարաքս, ի վարս կրաստոսի:  
2. Ըստ Եւտարիոս ժամանակակից պատմիչի:  
3. Regina rerum Roma, Regi Eloquentiae.